Հաստատված է
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
2023 թվականի հունիսի 30-ի N 7-L որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД "ДОРОЖНЫЙ ДЕПАРТАМЕНТ"
"ROAD DEPARTMENT" FUND

ԵՐԵՎԱՆ
2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ 2
ՆԱԽԱԲԱՆ..... 3
1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ..... 5
2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ..... 13
3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 19
3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2 22
3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ-3 27
3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3 31
3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ՏՐԱՆՇ 4 Քաջարան-Ագարակ ճանապարհահատված 36
3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր 40
3.6 ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ 60ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 41
3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5 Գյումրու շրջանցիկ և Գյումրի-Բավրա ճանապարհահատված 43
3.8 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 45
3.9 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 47
3.10 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 52
3.11 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 57
3.12 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 63
4. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 67
5. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 74
6. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 81
7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ 84
8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 87
9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ 88

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ
(2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ)

- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ**
- **Կադաստրի կոմիտեի ղեկավար**
- **ՀՀ ոստիկանության պետ**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհաշինության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ (գնումների քաղաքականության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ (հանրային ներդրումների ոլորտը համակարգող)**
- **փոխվարչապետի (ենթակառուցվածքների ոլորտը համակարգող) գրասենյակի ղեկավար**
- **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով):**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Գոռ Ավետիսյանը:

ՆԱԽԱԲԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Հիմնադրամի հիմնադրի անունից, որպես պետական լիազոր մարմին, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Հիմնադրամը ստեղծվել է վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է. ունի իրավաբանական անձի կարգավիճակ:

Հիմնադրամի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

1) հիմնադրի ներդրումը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որը ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը՝ համաձայն Հիմնադրամի կանոնադրության:

Հիմնադրամի գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որը վարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է խորհրդին:

Ստորև կներկայացվեն 2022 թվականի ընթացքում կատարված աշխատանքներն՝ ըստ ծրագրերի, անդրադարձ կկատարվի ավտոմոբիլային ցանցի զարգացման, նպատակային օգտագործման և պահպանման նպատակով պետական քաղաքականության մշակմանն օժանդակելուն ուղղված գործառույթներին՝ երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում, ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում և այլն, ինչպես նաև կներկայացվի տեղեկատվություն Հիմնադրամի աշխատակազմի, դատական գործերի և հանրությանն իրազեկման վերաբերյալ:

Հիմնադրամն իր կարճատև գործունեության ընթացքում ունի նշանակալի և ակնհայտ ձեռքբերումներ, վստահ ենք, որ ապագայում կարձանագրենք նոր նվաճումներ և կունենանք արդեն ձևավորված և հաստատում մշակույթ ճանապարհաշինության ոլորտում:

Հաշվետվության մեջ օգտագործվող հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

ԱԶԲ- Ասիական Զարգազման Բանկ

ՎԶԵԲ - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ

ԵՆԲ - Եվրոպական ներդրումային Բանկ

ԵԶԲ - Եվրասիական Զարգացման Բանկ

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՀՀՃՄՆ ծրագիր - Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր

ՃՏՊ - ճանապարհատրանսպորտային պատահար

ՃԵԿ - ճանապարհային երթևեկության կանոններ

ՀՕՏԾ – Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր

1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ճանապարհաշինության բնագավառում կատարվելիք գնումների դեպքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում նախատեսված էր հիմնանորոգել, վերակառուցել և կառուցել առնվազն 300 կմ (ներառյալ 2021 թվականին սկսված և 2022 թվական տեղափոխված 54.4 կմ, ՀՀ Սյունիքի մարզի այլընտրանքային շուրջ 88.3 կմ) ընդհանուր երկարությամբ պետական նշանակության ճանապարհահատվածներ:

Հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ բնակչության անվտանգությունն ու կենսական կարիքներն ապահովելու նպատակով 2022 թվականին ՀՀ Սյունիքի մարզում իրականացվել են Լծեն-Տաթև (19.9 կմ), Որոտան - Խոտ (10.3 կմ), Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան (8.7 կմ), Տանձավեր - Շուռնուխ (12.9 կմ), Մ-17, /Մ-2/(Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ (7.5

կմ), Լծեն-Շամբ (6.19կմ) և Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի- Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող (11.04 կմ), /Մ-12/ - Կոռնիձոր – ՀՀ սահման (շուրջ 11.78կմ) այլընտրանքային ճանապարհների կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքներ: Նշված ճանապարհահատվածներից Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան 8.7կմ, Տանձավեր - Շուռնուխ 12.9 կմ , Մ-17, /Մ-2/(Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ 7.5կմ երկարությամբ ավտոճանապարհների կառուցման աշխատանքները 2022 թվականին ավարտվել և ընդունվել են շահագործման: Լծեն-Տաթև և Լծեն-Շամբ ավտոճանապարհների վերակառուցման աշխատանքներից 2022 թվականին իրականացվել են ընդհանուր երկարությամբ 20.8կմ-ը, իսկ 5.3կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների վերակառուցման աշխատանքների ավարտը տեղափոխվել է 2023 թվական: Որոտան - Խոտ (10.3 կմ) ճանապարհահատվածի վերակառուցման, Վերին Խոտանանը շրջանցող (11.04 կմ), /Մ-12/ - Կոռնիձոր – ՀՀ սահման (շուրջ 11.78կմ) ճանապարհահատվածների կառուցման աշխատանքներից 2022 թվականին իրականացվել են հիմնականում հողային և արհեստական կառուցվածքների կառուցման աշխատանքներ, իսկ ընդհանուր աշխատանքները նախատեսվել է ավարտել 2023 թվականին:

2022 թվականին ընթացքում իրականացվել են 301.5 կմ (այդ թվում՝ 2021 թվականին սկսված և 2022 թվական տեղափոխված 54.4 կմ, ՀՀ Սյունիքի մարզի այլընտրանքային 49.9 կմ) ընդհանուր երկարությամբ պետական նշանակության ավտոճանապարհների

հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ, որից 79 կմ՝ միջպետական, 132.2 կմ՝ հանրապետական, 90.3 կմ՝ տեղական նշանակության ճանապարհահատվածներ են:

h/h	Օբյեկտի անվանումը	Երկար. /կմ/ 2022թ.
	01. Ճանապարհների հիմնանորոգում, այդ թվում	**301.5**
	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	**78.99**
1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ պետական սահման կմ98+000 - կմ101+400 հատվածի հիմնանորոգում (ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի փոփոխությամբ պայմանավորված լրացուցիչ շերտ)	3.4
2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ պետական սահման կմ196+000-կմ202+200 հատվածի հիմնանորոգում (ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի փոփոխությամբ պայմանավորված լրացուցիչ շերտ)	6.2
3	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150+700 - կմ167+600 հատվածի հիմնանորոգում	11
4	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ329+820 - կմ338+100 հատվածի հիմնանորոգում	7.6
5	Մ-3, ՀՀ պետական սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ2+000 - կմ10+500 հատվածի հիմնանորոգում	1.6
6	Մ-3, ՀՀ պետական սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ97+020-կմ104+700 հատվածի հիմնանորոգում	7.492
7	Մ-3, ՀՀ պետական սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ154+000-կմ176+900 հատվածի հիմնանորոգում	9.9
8	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+176-կմ96+176 հատվածի հիմնանորոգում և ոլորանների պարամետրերի բարելավում	4
9	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ66+000-կմ80+000 հատվածի հիմնանորոգում	7.4
10	Մ-11, Մարտունի - Վարդենիս - ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ5+900 հատվածի հիմնանորոգում	4.9

11	Մ-13, /Մ-2/ - Անգեղակոթ - ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+000 հատվածի հիմնանորոգում	8
12	Մ-17, /Մ-2/(Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցում	7.5
	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**132.25**
1	Հ-2, /Հ-1/ Աբովյան- Արզնի-/Հ-6/ (Նոր Գեղի) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+400 հատվածի հիմնանորոգում	1.4
2	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+000 հատվածի հիմնանորոգում	6
3	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 25+200 - կմ36+000 հատվածի հիմնանորոգում	10.8
4	Հ-8, /Մ-2/-Այնթապ-Մխչյան-Արտաշատ-Այգևան-/Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+200-կմ 26+400 և կմ30+000-կմ33+500 հատվածների հիմնանորոգում	8.7
5	Հ-12, Մասիսի տրանսպորտային հանգույց - Մասիս - Ռանչպար - Արաքս - Ջրառատ - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ9+500 հատվածի հիմնանորոգում	5
6	Հ-21, /Հ-75/ - Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ19+000 - կմ23+900 հատվածի հիմնանորոգում	1
7	Հ-30, Մոտեցում Գոշավանքին հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ 3+900 հատվածի հիմնանորոգում	3.9
8	Հ-30, /Մ-4/ - Ճամբարակ - /Մ-14/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ11+000 հատվածի հիմնանորոգում	11
9	Հ-32, /Մ-1/ (Գյումրի) - Կապս - Ամասիա - /Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 20+900-կմ 22+700 և կմ 23+000-կմ 31+200 հատվածների հիմնանորոգում	1.4
10	Հ-33, /Մ-3 /Ստեփանավան-Ագարակ-Յաղդան-/Հ-35/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+100 հատվածի հիմնանորոգում	6.04
11	Հ-36, /Մ-4/ (Իջևան) - Նավուր - Բերդ - Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600 - կմ42+100 հատվածի հիմնանորոգում	4.5
12	Հ-39, /Մ-10/ - Գավառ - /Մ-10/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ4+300 - կմ7+700 հատվածի հիմնանորոգում	2.9

13	Հ-41, /Մ-2/ - Նորավանքի պատմական հուշարձան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+100 հատվածի հիմնանորոգում	8.1
14	Հ-45, /Մ-2/-Շաքի-Սիսան-Դաստակերտ-Ցողունի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ14+590-կմ25+900 հատվածի հիմնանորոգում	11.31
15	Հ-46, /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգում (պատվածքի կրողունակության ուժեղացման անհրաժեշտությամբ պայմանավորված լրացուցիչ շերտ)	12.5
16	Հ-46, /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ37+500-կմ55+000 հատվածի հիմնանորոգում (պատվածքի կրողունակության ուժեղացման անհրաժեշտությամբ պայմանավորված լրացուցիչ շերտ)	17.5
17	Հ-46, /Մ-2/-Տաթև-Աղվանի-/Մ-2/(Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ55+000-կմ68+000 հատվածի հիմնանորոգում (պատվածքի կրողունակության ուժեղացման անհրաժեշտությամբ պայմանավորված լրացուցիչ շերտ)	13
18	Հ-75, Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ23+250 - կմ37+500 և կմ45+300 - կմ60+200 հատվածների հիմնանորոգում	4.5
19	Հ-93, /Հ-75/ - Երերույքի տաճար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 2+700 հատվածի հիմնանորոգում	2.7
	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**90.29**
1	Տ-1-65, /Մ-1/ - Ներքին Բազմաբերդ (Տ-1-60) ավտոճանապարհի կմ1+300 – կմ1+400 հատվածի հիմնանորոգում	0.1
2	Տ-2-31, /Տ-2-30/ - Բերդիկ - /Հ-9/ (Այգեստան) ավտոճանապարհի կմ0+000-կմ2+100 հատվածի հիմնանորոգում	2.1
3	Տ-2-62, /Հ-8/ (Այգավան) - /Հ-11/ (Եղեգնավան) ավտոճանապարհի կմ0+100 - կմ3+000 հատվածի հիմնանորոգում և կմ0+100-ից դեպի Այգավան ուղեանցի /Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհի վրայի ուղեանց/ և մոտեցումների նորոգում	3.25
4	Տ-3-76, Զարթոնք - Արտաշար /Տ-3-54/ ավտոճանապարհի կմ 0+000-կմ 2+100 հատվածի հիմնանորոգում	2.1
5	Տ-5-7, /Մ-7/ (Շիրակամուտ) - Լեռնավան (Տ-5-38) ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+142 հատվածի հիմնանորոգում	1
6	Տ-5-23, /Մ-3/ - Սարամեջ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+300 հատվածի հիմնանորոգում	0.8
9	Տ-7-42, /Մ-7/ (Գյումրի) – Հացիկ – Կարմրաքար (Տ-7-45) ավտոճանապարհի կմ0+000-կմ 4+000 հատվածի հիմնանորոգում	4

10	Տ-7-48, Գյումրի (Տ-7-58) - Արևիկ – Այգեբաց - Վարդաքար - /Հ-21/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ10+440 - կմ16+200 հատվածի հիմնանորոգում	5.76
11	Տ-8-22, /Մ-2/ - Վարդավանք – Խդրանց - Ագարակ ավտոճանապարհի կմ0+000 - կմ13+100 հատվածի հիմնանորոգում	10.6
12	Տ-9-19, /Մ-2/ - Հերհեր -Կարմրաշեն մարզային նշանակության ավտոճանապարհի կմ10+000 - կմ18+700 հատվածի հիմնանորոգում	8.7
13	Տ-10-16, /Հ-64/ - Քոլագիրի ճամբար ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+700 հատվածի հիմնանորոգում	1.7
14	Մարտունի քաղաքի Սայաթ Նովա փողոցի (Մ-10-ի շրջանց) ավտոճանապարհի հիմնանորոգում	2.5
15	Հրազդան քաղաքի Տիգրան Մեծ փողոցի 290 գծ.մ հատվածի հիմնանորոգում	0.29
16	Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի միջթաղամասային փողոցների 3384 գծ.մ (626 գծ.մ, 310 գծ.մ, 176 գծ.մ, 1235 գծ.մ, 950 գծ.մ և 87 գծ.մ) հատվածների հիմնանորոգում	3.384
17	Հրազդան քաղաքի հարավային թաղամաս 1069 գծ.մ (Նոյեմբերյան փողոց 627 գծ.մ, Մյասնիկյան փողոց 442 գծ.մ) հատվածների հիմնանորոգում	1.069
18	Արթիկ համայնքի Սպանդարյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	0.534
19	Տ-8-93, Լծեն-Տաթև ավտոճանապարհի վերակառուցում	17.8
20	Տ-8-49,/Տ-8-48/-Լծեն ավտոճանապարհի վերակառուցում	3
21	Հ-46(Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհի կառուցում	8.7
22	Տանձավեր-Շուռնուխ ավտոճանապարհի կառուցում	12.9

2022 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր 46,000,000.0 դրամ, որը ՀՀ կառավարության որոշումներով ավելացել և ճշտված պլանը կազմել է 51,351,819.9 դրամ, փաստացի ծախսը կազմել է 47,802,049.22 դրամ: 3,549,770.68 դրամ տարբերությունը պայմանավորված է որոշ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների մեկնարկից հետո բնակավայրերի մոտակայքով անցնող ճանապարհահատվածներում բնակիչների միջև առաջացած տարաձայնությունների պատճառով տեղանքին համապատասխան նախագծային նոր լուծումներ տալու և աշխատանքները նախագծային նոր լուծումներով իրականացնելու անհրաժեշտությամբ (այդ ճանապարհների ծրագծերի առանձին հատվածների փոփոխությունների

անհրաժեշտության առաջացման և տվյալ խնդիրներին նոր նախագծային լուծումներ տալու համար պահանջվել է որոշակի ժամանակ): Արդյունքում, որոշ ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների ընթացքը դանդաղել է և նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չեն ավարտվել:

Կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են այդ աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

2022 թվականի ՀՀ պետական բյուջեի «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում կազմակերպված մրցույթային գործընթացներից թվով 9 տրանսպորտային օբյեկտի (որից՝ թվով 2-ը կամուրջ) շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցույթը կայացել է և թվով 8 օբյեկտների շինարարական աշխատանքների համար կնքվել են կապալի պայմանագրեր, որից թվով 2 տրանսպորտային օբյեկտների (կամուրջ) շինարարական աշխատանքների կապալի պայմանագիրը հետագայում լուծվել է, թվով 1 տրանսպորտային օբյեկտի (կամուրջ) շինարարական աշխատանքների կապալի պայմանագրի կնքման գործընթացը՝ պայմանագրի կնքման համար տրված անգործության ժամկետով պայմանավորված տեղափոխվել է 2023 թվական, իսկ թվով 6

տրանսպորտային օբյեկտների (որից՝ թվով 3-ը կամուրջ) շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթը չի կայացել մասնակից չլինելու պատճառով: Կնքված պայմանագրերի շրջանակներում թվով 5 տրանսպորտային օբյեկտների (որից՝ թվով 4-ը կամուրջ, իսկ թվով 1-ը հենապատ) շինարարական աշխատանքներն ավարտվել են 2022 թվականին, իսկ թվով 1 տրանսպորտային օբյեկտի (կամուրջ) շինարարական աշխատանքները կատարվել են 91%-ով:

2022 թվականի ՀՀ պետական բյուջեի «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառմամբ նախատեսվել է 1,101,000 հազ.դրամ, որը նվազեցվել է և ճշտված պլանը կազմել է 439,178.9 հազ. դրամ, որից փաստացի ծախսը կազմել է 409,913.1 հազ. դրամ: 29,265.8 հազար դրամ տարբերությունը պայմանավորված է թվով 1 կամրջի շինարարական աշխատանքների չավարտվելու, ավարտված թվով 4 կամուրջներ շահագործման չընդունվելու հետևանքով պայմանագրային գումարի 5 տոկոսի, այդ աշխատանքների նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարների, ինչպես նաև թվով 5 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման համար պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման ծառայությունների 30 տոկոսի չվճարմամբ:

Կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են այդ աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում է ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների նկատմամբ:

Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգումն իրենից ներկայացնում է ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ:

2022 թվականի ընթացքում միջին նորոգման աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում:

➢ **ՀՀ Արագածոտնի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Հ-75 /Մ-9/-Իսահակյան-Գյումրի-/Մ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ15+900 և կմ21+932-կմ23+250 հատվածներ.

2. Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ27+000-կմ33+500 հատված:

Շինարարական աշխատանքները նախատեսված է իրականացնել 2022-2023 թվականների ընթացքում: Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,137 մլրդ. ՀՀ դրամ, որից 2022 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների արժեքը կազմում է 947,6 մլն. ՀՀ դրամ:

➢ **ՀՀ Արարատի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ28+900-կմ36+212 (ձախ գոտի) հատված.

2. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ28+900-կմ36+212 (աջ գոտի) հատված:

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 789,0 մլն. ՀՀ դրամ:

➢ **ՀՀ Արմավիրի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-9/Մ-1/-Թալին–Քարակերտ–Շենիկ–Բագարան-Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ19+000-կմ22+200 հատված.

2. Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ18+200-կմ19+635, կմ19+945-կմ24+434, կմ24+689-25+593, կմ29+385+կմ29+896, կմ30+152-կմ32+675, կմ33+833-կմ37+417 (աջ գոտի) հատվածների միջին նորոգում և կմ19+635-կմ19+945, կմ24+434-կմ24+689, կմ29+896-կմ30+152 և կմ33+581-կմ33+833 (աջ գոտի) հատվածների գծանշման աշխատանքներ.

3. Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ18+200-կմ19+635, կմ19+945-կմ24+434, կմ24+707-25+593, կմ29+385+կմ29+896, կմ30+152-կմ32+675 և կմ33+833-կմ37+417 (ձախ գոտի) հատվածների միջին նորոգում և կմ19+63-կմ19+945, կմ24+434-կմ24+707, կմ29+896-կմ30+152 և կմ33+581-կմ33+833 (ձախ գոտի) հատվածների գծանշման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,137 մլրդ. ՀՀ դրամ, որից 2022 թվականի ընթացքում կատարման ենթակա աշխատանքների արժեքը կազմել է 1,469 մլրդ. ՀՀ դրամ:

- **ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-4 Երևան-Սևան-Իջևան–Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ74+226-կմ74+600 հատված.

2. Մ-10 Սևան–Մարտունի–Գետափ-/Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+000 (աջ և ձախ գոտիներ) հատվածի և Վլ. Կարապետյանի անվան հրապարակ:

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 146,8 մլն. ՀՀ դրամ:

- **ՀՀ Կոտայքի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-4 Երևան-Սևան-Իջևան–Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ10+300-կմ24+860 (ձախ գոտի) հատված.

2. Մ-1 Երևան–Գյումրի-Վրաստանի Հանրապետության սահման (ձախ գոտի) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ14+400-կմ18+400 հատված.

3. Մ-1 Երևան–Գյումրի-Վրաստանի Հանրապետության սահման (աջ գոտի) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ14+400-կմ18+400 հատված:

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,094 մլրդ. ՀՀ դրամ:

- **ՀՀ Շիրակի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Շիրակի մարզում միջին նորոգման ենթարկվել է Հ-32 /Մ-1/-Գյումրի-Կապս-Ամասիա-/Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ1+100-կմ11+784 հատվածը:

Կատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 630 մլն. ՀՀ դրամ:

- **ՀՀ Սյունիքի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-12 Գորիս-Արցախի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ4+000-կմ20+850 հատված.

2. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–Իրանի իսլամական հանրապետության սահման կմ338+100-կմ342+400 հատված.

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,191 մլրդ. ՀՀ դրամ, որից 2022 թվականի ընթացքում կատարման ենթակա աշխատանքների արժեքը կազմել է 1,155 մլրդ. ՀՀ դրամ:

➢ **ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացված միջին նորոգման ճանապարհաշինական աշխատանքներ.**

Ճանապարհահատվածներն են՝

1. Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ–/Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108+800 - կմ124+000 հատված.

2. Հ-43 /Մ-2/-Գնդևազ-Ջերմուկ-Արցախի սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ23+754 հատված:

Շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 1,490 մլրդ. ՀՀ դրամ, որից 2022 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների արժեքը կազմել է շուրջ 1,475 մլն. ՀՀ դրամ:

N	Օբյեկտի անվանումը	Երկար. /կմ/ 2022թ.
	Ճանապարհների միջին նորոգում, այդ թվում՝	**153.755**
	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	
1	Մ-1 Երևան–Գյումրի-Վրաստանի սահման /ձախ գոտի/ կմ14+400 ÷ կմ18+400	4.0
2	Մ-1 Երևան–Գյումրի-Վրաստանի սահման /աջ գոտի/ կմ14+400 ÷ կմ18+400	4.0
3	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–ԻրանիԻսլամականՀանրապետության սահման կմ338+100-կմ342+400 հատված	4.3
4	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–ԻրանիԻսլամականՀանրապետության սահման կմ28+900-կմ36+212 /ձախ գոտի/ հատված	7.312
5	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի–ԻրանիԻսլամականՀանրապետության սահման կմ28+900-կմ36+212 /աջ գոտի/ հատված	7.312

6	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման–Մարգարա–Վանաձոր–Տաշիր-Վրաստանի սահման կմ27+000 - կմ35+535 հատված	5.335
7	Մ4/ Երևան-Սևան-Իջևան–Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ10+300-կմ24+860 հատվածի (ձախ գոտի)միջին նորոգում	14.56
8	Մ-4 Երևան-Սևան-Իջևան–Ադրբեջանի Հանրապետության սահման (մակերև մշակում) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ74+226 - կմ80+702 հատված	0.374
9	Մ-5, Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ18+200-կմ19+635, կմ19+945-կմ24+434, կմ24+707-25+593, կմ29+385+կմ29+896, կմ30+152-կմ32+675 և կմ33+833-կմ37+417 հատվածների միջին նորոգման և կմ19+635÷կմ19+945, կմ24+434 ÷կմ24+707, կմ29+896÷ կմ30+152 և կմ33+581÷կմ33+833 հատվածների գծանշման աշխատանքներ (ձախ գոտի)	13.428
10	Մ-5, Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ18+200-կմ19+635, կմ19+945-կմ24+434, կմ24+689-25+593, կմ29+385+կմ29+896, կմ30+152-կմ32+675 և կմ33+833-կմ37+417 հատվածների միջին նորոգման և կմ19+635÷կմ19+945, կմ24+434 ÷կմ24+689, կմ29+896÷ կմ30+152 և կմ33+581÷կմ33+833 հատվածների գծանշման աշխատանքներ (աջ գոտի)	13.446
11	Մ-9/Մ-1/-Թալին–Քարակերտ–Շենիկ–Բագարան-Թուրքիայի Հանրապետությանսահման կմ19+000-կմ22+200	3.2
12	Մ10 Սևան-Մարտունի-Գետափ – /Մ-2/ /աջ և ձախ/ գոտիներ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ1+000 հատված և Վլ. Կարապետյանի անվան հրապարակ	2
13	Մ-12 Գորիս-Արցախի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ4+000-կմ20+850 հատվածի միջին նորոգում	16.85
	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	
1	Հ-43 /Մ-2 /-Գնդևազ -Ջերմուկ - Արցախի սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ23+754 հատվածի միջին նորոգում	23.754
2	Հ-32/Մ-1/-Գյումրի -Կապս-Ամասիա-Մ-1 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ1+100-կմ11+784 հատվածի միջին նորոգում	10.684
3	Հ-75 /Մ-9/ - Իսահակյան- /Մ-7/ (Գյումրի) կմ0+000 - կմ15+900և կմ21+932-կմ23+250 հատվածներ	8.0

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀՃՄՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է: Ծրագրի նպատակներն են՝ հարևան երկրների հետ հաղորդակցման դյուրինացումը, Կենտրոնական Ասիա և Եվրոպա ձգվող հաղորդակցության ուղիներով դեպի արտաքին շուկաներ ելքի հնարավորությունների ընդլայնումը, տնտեսության հիմնական ոլորտների զարգացումն ու արտահանման ընդլայնումը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, զբոսաշրջություն), բնակչության ներքին շարժերի ակտիվացումը և այլն: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի հարավային սահմանից դյուրին երթևեկությունը մինչև Վրաստանի սահման, ապա նաև՝ դեպի սևծովյան նավահանգիստներ, թույլ կտա իրականացնել բարձր չափանիշներին համապատասխանող բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ, զարգացման լուրջ հնարավորություններ կընձեռի Հայաստանի հարավից հյուսիս ընկած բոլոր բնակավայրերին:

ՀՀՃՄՆ ծրագիրն իրականացվում է տրանշերով, որոնցից յուրաքանչյուրն առանձին ծրագիր է և ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից:

- **Տրանշ-1.** Երևան-Աշտարակ և Երևան-Արտաշատ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացված ավարտված ծրագիր)
- **Տրանշ-2.** Աշտարակ-Թալին ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Թալին-Լանջիկ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Լանջիկ-Գյումրի ճանապարհահատված (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

- **Տրանշ-4.** Քաջարան-Ագարակ ճանապարհահատված (Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-4.** Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր (նոր նախաձեռնություն)
- **Տրանշ-4.** Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցման ծրագիր
- **Տրանշ-4.** Արտաշատ-Սիսիան ճանապարհահատված (նոր նախաձեռնություն)
- **Տրանշ-5.** Գյումրու շրջանցիկ և Գյումրի-Բավրա ճանապարհահատված (նոր նախաձեռնություն):

Բոլոր ծրագրերն իրականացվում են
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից:

3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2

ՏՐԱՆՇ 2-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Աշտարակ-Թալին հատվածում նախատեսվում է կառուցել I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված: Գոյություն ունեցող միակողմանի 2 երթևեկելի գոտուց բաղկացած Մ-1 մայրուղին վերակառուցվում է միջազգային չափանիշներին համապատասխան 4 երթևեկելի գոտուց բաղկացած երկկողմ ավտոմայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը.

ա) ճանապարհահատվածի հարմարավետության ու անվտանգության բարձրացում,

բ) ապրանքաշրջանառության մեծացում,

գ) տրանսպորտային ծախսերի կրճատում,

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում,

ե) զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 210,000,000 $, որից



170,000,000 $ վարկային միջոց

40,000,000 $ ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.2729-ARM, ստորագրված՝ 30.05.2011թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 01.04.2015թ.-01.10.2034թ.:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,30%, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար (վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից հաշված):

Շինարարությունը նախատեսված է իրականացնել երկու հատվածներով՝ Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատված (29+600-կմ 37+545) և 34 կմ անավարտ հատված (կմ 37+545-կմ 71+500):

Առաջին 8 կմ հատվածի կապալառու է հանդիսանում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ և Դինեշչանդրա Ռ Ագրիվալ ինտրակոմ ՀՁ, Հայաստան և Հնդկաստան:

Ծրագրի խորհրդատու (տեխնիկական վերահսկող) հանդիսանում է «ԷՋԻՍ Ինթերնեյշն» և «Կոքս Քընսալթինգ» ՀՁ:

Ծրագրի ընթացիկ վիճակը.

Իրականացվել են հողային աշխատանքների ընդհանուր ծավալի շուրջ 85%-ը և բետոնյա պատվածքի ընդհանուր ծավալի շուրջ 34%-ը: Կառուցվող ճանապարհի մոտ 9 կմ հատվածն արդեն իսկ բաց է երթևեկության համար: Ֆիզիկական փաստացի աշխատանքի ծավալը կազմում է ընդհանուր ֆիզիկական ծավալի շուրջ 52%-ը: Տրանշ 2-ի նախկին կապալառուն դադարեցրել է շինարարական աշխատանքները՝ սկսած 2018 թվականի տարեվերջից, և լքել Հայաստանը: 2019 թվականի հուլիսի 18-ին «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» իսպանական ընկերությանը ծանուցվել է պայմանագիրը լուծելու, կապալառուի կողմից պայմանագրի դրույթների բազմաթիվ խախտումների, ինչպես նաև վերջինիս անվճարունակ լինելու փաստի մասին: Հայաստանի Հանրապետության կողմից վարձվել է “LALIVE” շվեցարական իրավաբանական ընկերությունը՝ Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար: 2019 թվականի նոյեմբերին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Առևտրի միջազգային պալատ է ներկայացվել դիմում

«Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» բաժնետիրական ընկերության նկատմամբ արբիտրաժային գործընթաց սկսելու վերաբերյալ, որն այժմ ընթացքի մեջ է:

Միջոցներ են ձեռնարկվել այլ կապալառու/կապալառուների միջոցով ծրագիրը շարունակելու ուղղությամբ: Մասնավորապես, շինարարությունը նախատեսված է իրականացնել երկու հատվածներով՝ Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատված (29+600-կմ 37+545) և 34 կմ անավարտ հատված (կմ 37+545-կմ 71+500): Այս նպատակով նախատեսվել էր ներգրավել ծրագրի նոր ինժեներ/խորհրդատուի: Տրանշ 2-ի շինարարական աշխատանքները հնարավոր սեղմ ժամկետում վերսկսելու նպատակով, նախորդ շինարարի կողմից չիրականացված ծավալների հաշվարկման, առկա նախագծերի լրամշակման, նոր մրցութային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև շինարարության ժամանակ Ինժեների գործունեությունը իրականացնելու համար նախատեսվել է պայմանագիր ստորագրել «Էջիս Ինթերնեյշնլ» ֆրանսիական ընկերության հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերությունը մշակել է Տրանշ 1, 2 և 3-ի ծրագրերի նախագծերը, ներկայումս էլ ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացնում է Ինժեների պարտականությունները: 2021 թվականի փետրվարի 26-ին «Էջիս Ինթերնեյշնլ և Կոքս Քոնսալթ» համատեղ ձեռնարկության հետ ստորագրվել է համապատասխան պայմանագիր:

2022 թվականին ավարտվել են 8 կմ (կմ 29+600-կմ 37+545) հատվածի առկա նախագծի լրամշակման և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Լրամշակված նախագիծն անցել է հատուկ համալիր փորձաքննություն: Ավարտվել է կապալառուների ընտրության միջազգային բաց մրցույթը: 2022 թվականի հոկտեմբերին ընտրված կապալառուի հետ կնքվել է շինարարական աշխատանքների պայմանագիր, ինչը հաստատվել է ԱՋԲ-ի կողմից: Ընթացքի մեջ է հողերի օտարման գործընթացը:

2021 թվականից սկսվել են 34 կմ հատվածի (կմ 37+545-կմ 71+500) նախագծի և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որոնք ավարտվել են 2022 թվականի հունվարի վերջին: Կապալառուների ընտրության միջազգային բաց մրցութային գործընթացը կավարտվի 2023 թվականի II եռամսյակի ընթացքում:

Տրանշ 2-ի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականի II կիսամյակում՝ կախված 2-րդ հատվածի կապալառուի հետ պայմանագիր ստորագրելու ամսաթվից:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

NNo	Բաղադրիչներ, ենթածրագրերը և կատեգորիաներ*	Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները			Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները		
		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
			Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
1	2	7	8	9	11	12	13
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2, այդ թվում՝	**111,063,696.18**	**88,815,972.83**	**22,247,723.35**	**137,193,189.67**	**116,186,973.11**	**21,006,216.56**
ա)	շինարարական աշխատանքներ	89,777,153.10	74,814,294.25	14,962,858.85	115,606,538.55	102,129,707.33	13,476,831.22
բ)	խորհրդատվական ծառայություններ	14,877,874.49	10,001,678.59	4,876,195.90	15,177,982.52	10,057,265.78	5,120,716.74
գ)	Տոկոսագումար և պարտավորագին	4,000,000.00	4,000,000.00	0.00	4,000,000.00	4,000,000.00	0.00
դ)	դրամաշնորհներ, ՀՕՏԾ-ի գծով	2,408,668.60	0.00	2,408,668.60	2,408,668.60	0.00	2,408,668.60

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2022թ.



3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

ՏՐԱՆՇ-3-Ի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Տրանշ-3-ի շրջանակներում նախատեսվում է Թալին և Լանջիկ քաղաքների միջև գտնվող մոտ 18,7 կմ երկարությամբ Թալին-Լանջիկ երկուղի ճանապարհային հատվածի վերակառուցում և այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկությամբ քառուղի մայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրինացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը, մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի, սոցիալական ծառայությունների հասանելիությունը,

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 132,406,091 $, որից



100,000,000 $ վարկային միջոց

32,406,091 $ ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.2993-ARM, ստորագրված՝ 11.03.2014թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 27 տարի (7 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,20%, չմասհանված գումարների նկատմամբ՝ 0,20% կոմիսիոն վճար, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար:

Ծրագրի հիմնական կապալառուն չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունն է, որի հետ 2016 թվականի մայիսի 25-ին ստորագրվել է No T3-CW-01 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ71+500-կմ90+200 (Թալին-Լանջիկ հատված) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

Ծրագրի խորհրդատուն (տեխնիկական վերահսկողը) իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունն է (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը.

2022 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵՎ ՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՈՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԹԱՓՈՎ ԸՆԹԱՑԵԼ ԵՎ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, 2022Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԲԱՑՎԵԼ Է ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ:

2022 թվական ընթացքում շինարարական և ասֆալտապատման աշխատանքներն ընթացել են մեծ տեմպերով: Հիմնական շինարարական աշխատանքներն ավարտվել են և ընդունվել են Ինժեների կողմից (ստորագրվել է ընդունման հավաստագիրը)՝ պայմանով, որ ձմեռային սպասարկումը և ամառային սպասարկումը, մինչև մնացորդային շինարարական աշխատանքների ավարտը, կստանձնի Կապալառուն:

Թերությունների վերացման (հետերաշխիքային) ժամանակաշրջանը սահմանվել է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, Վարկ 2993-ARM, այդ թվում՝	16,325,146.0	13,815,253.9	2,509,892.1	15,736,199.5	13,051,860.7	2,684,338.8
1	Շինարարական աշխատանքներ	13,646,978.8	11,372,482.8	2,274,496.0	13,087,970.4	10,641,896.1	2,446,074.4
2	Խորհրդատվություն և նախագծում	1,282,537.8	1,061,292.8	221,245.1	1,223,073.1	1,001,544.6	221,528.5
3	Ծրագրի կառավարման աջակցություն	468,890.0	454,739.0	14,151.1	498,416.6	481,680.7	16,735.9
4	Տոկոսագումարը շինարարության ընթացքում	926,739.3	926,739.3	-	926,739.3	926,739.3	-

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2022թ.



3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

ԵՆԲ ՏՐԱՆՇ 3-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հարնապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, ԵՆԲ Տրանշ 3-ի շրջանակներում նախատեսվում է Մ1 միջպետական Թալինից Գյումրի ճանապարհի Լանջիկ և Գյումրի քաղաքների միջև գտնվող մոտ 27.47կմ երկարությամբ երկուղի ճանապարհահատվածի վերակառուցում և բարելավում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկության քառուղի մայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրինացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը, մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի, սոցիալական ծառայությունների հասանելիությունը,

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 79,845,934 ԵՎՐՈ, որից



60,000,000 € վարկային միջոց
6,000,000 € դրամաշնորհ
13,845,934 € ՀՀ համաֆինանսավորում
Ծրագիրն ունեցել է նաև տեխնիկական աջակցության մաս՝ 6,000,000€ արժողությամբ դրամաշնորհ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում Եվրոպական ներդրումային բանկի վարկային միջոցներից, ԵՆԲ-ի միջոցով Եվրոմիության Հարևանության ներդրումային գործիքի շրջանակներում տրամադրված դրամաշորհային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. FI82.634, ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև՝ 07.11.2013 թվականին Երևանում և 18.11.2013 թվականին Լյուքսեմբուրգում:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30 տարի:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ հաստատագրված կամ լողացող, ամրագրվելու է առանձին՝ յուրաքանչյուր տրանշի համար: Լողացող տոկոսադրույքը հավասար է 6-ամսյա EURIBOR գումարած 0,623% մարժա:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ հանդիսանում է չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունը, որի հետ 2015 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրվել է No T3-CW-02 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ90+200-ից կմ117+670 հատվածի (Լանջիկ-Գյումրի հատվածի) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) հանդիսանում է իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունը (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը.

2022 թվականի ընթացքում ընթացել են ճանապարհի վերակառուցման աշխատանքները, իրականացվել են հողային և արհեստական կառուցվածքների իրականացման և ասֆալտապատման աշխատանքներ: ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորման ձգձգման պատճառով աշխատանքների տեմպը դանդաղել էր: Ստեղծված իրավիճակը բարելավելու և Ծրագրի անխափան ընթացքն ապահովելու համար ՀՀ կառավարությունը համապատասխան որոշմամբ տրմադրել է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և 2022 թվականի հուլիսից աշխատանքները վերսկսվել են և արդեն տարվա երկրորդ կեսին ընթացել մեծ տեմպերով: Տարեվերջի դրությամբ ֆիզիկական առաջընթացը կազմել է 47%: Բենիամին համայնքի հնագիտական տարածքը շրջանցելու, դեպի երկրորդային ճանապարհներ և մասնավոր հողամասեր մուտքերի կառուցման նպատակով հողերի օտարման գործընթացի կազմակերպման գործոնով պայմանանավորված, ինչպես նաև

ֆինանսավորման խնդիրների հետ կապված՝ դոնոր կազակերպությանը ներկայացվել է հայտ ծրագրի ավարտի ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վարկային ծրագիր

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, Եվրո			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	**33,660,394.91**	**27,439,653.25**	**6,220,741.66**	**45,595,408.50**	**39,909,694.23**	**5,685,714.27**
1	շինարարական աշխատանքներ	31,760,099.59	26,556,290.79	5,205,004.43	43,710,659.20	39,039,623.49	4,671,035.71
2	խորհրդատվություն և նախագծում	1,899,099.69	883,362.46	1,015,737.23	1,883,550.05	870,070.74	1,013,479.31

NN	Բաղադրիչի անվանումը	Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները, Եվրո			Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	**9,346,170.94**	**8,485,159.17**	**861,011.77**	**8,903,924.26**	**8,116,620.27**	**787,303.99**
1	շինարարական աշխատանքներ	4,628,823.94	3,767,812.17	861,011.77	4,186,577.26	3,399,273.27	787,303.99
2	խորհրդատվություն և նախագծում**	4,717,347.00	4,717,347.00	0.00	4,717,347.00	4,717,347.00	0.00

*2022թ-ի ընթացքում դրամաշնորհից հատկացումներ չեն իրականացվել:

**Ֆինանսավորումը իրականացվել է անմիջապես ԵՆԲ-ի կողմից տեխնիկական աջակցության պայմանագրի շրջանակներում:

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2022թ. (մլն եվրո)





3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

ՏՐԱՆՇ 4-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է՝ Քաջարան-Ագարակ շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի վերակառուցումը:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը.

ա) Քաջարան-Ագարակ հատվածում II տեխնիկական կարգի ճանապարհի կառուցում.

բ) տրանսպորտային միջոցների առկա 50 կմ/ժ միջին արագության ավելացում մինչև 80 կմ/ժ.

գ) ժանապարհորդության ժամանակի մոտ 35-40 րոպեով կրճատում.

գ) ապրանքաշրջանառության մեծացում.

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում.

ե) զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 184,700,000 $, որից



150,000,000 $ վարկային միջոց

34,700,000 $ ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԵԶԲ_ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ՝ Եվրասիական տնտեսական միության հակաճգնաժամային ֆոնդից Հյուսիս-հարավ ավտոճանապարհային միջանցքի շինարարության (Տրանշ 4) համար ներդրումային վարկի տրամադրման համաձայնագիր, ստորագրված՝ 14.04.2015 թվականին Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30.06.2020 թվականից - 30.12.2034 թվականը:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ տարեկան 1,65%:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ «Այ Էր Դի Ինժեներինգ (Իտալիա) և Ջի Փի Ինժեներիա (Իտալիա)» ՀՁ ընկերությունն է, ում հետ կնքվել են № T4-CS-01-D պայմանագիրը՝ «Ագարակից մինչև թունելի ելքի մոտ 32 կմ ճանապարհի համար մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում և Թունելի մուտքից մինչև Քաջարան մոտ 7 կմ ճանապարհի և 6 կմ թունելի և իջատեղերի ճանապարհների մանրամասն նախագծի, Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախապատրաստում», և № T4-CS-01-DAS պայմանագիրը՝ «Ագարակից մինչև թունել 32 կմ ճանապարհի հեղինակային հսկողություն» իրականացման համար:

Ծրագրի ընթացիկ վիճակը. № T4-CS-01-D պայմանգրով Լոտ 1 Ագարակից մինչև թունելի ելքի՝ մոտ 32 կմ ճանապարհի նախագծման աշխատանքներն ավարտվել են:

Խորհրդատուն ներկայացրել է մանրամասն նախագիծ, որը դիտարկվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մասնագետների կողմից և անցել պարզ, համալիր և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննությունները:

Կապալառուի ընտրության մրցութային փաթեթը հաստատվել է Ծրագրի Կառավարման խորհրդի և ԵԶԲ կողմից: 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կայացել է վերակառուցման աշխատանքների մրցութային հայտերի բացումը: Հայտերը ներկայացվել են թվով ութ կազմակերպություններից: Մեկնարկել է հայտերի գնահատման գործընթացը: Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցույթը ընթացքի մեջ է:

Շարունակվում են Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման աշխատանքները:

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 06-ի N 1543-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի ապրիլի 14-ին ստորագրված «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարության (4-րդ հերթ) նախագծի

ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի վավերացման գործընթացը, համաձայն որի՝ նախագծային փոփոխությունների արդյունքում կավելանա նաև ծրագրի բյուջեն՝ կազմելով 280,996,000 ԱՄՆ դոլար:

2022 թվականի դեկտեմբերի 22-ին ԵԶԲ-ից ստացվել է պաշտոնական գրություն, համաձայն որի՝ վարկային միջոցների հասանելիության ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, Եվրո			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 4, այդ թվում՝	**1,562,878.17**	**1,099,462.94**	**463,415.23**	**1,302,664.45**	**914,401.69**	**388,262.76**
1	ա) շինարարական աշխատանքներ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	բ) խորհրդատվություն և նախագծում	1,325,796.02	1,099,462.94	226,333.08	1,098,373.24	914,401.69	183,971.55
3	գ) հողերի օտարում և վերաբնակեցում	189,436.66	0.00	189,436.66	189,436.65	0.00	189,436.65
4	դ) այլ ծախսեր	47,645.49	0.00	47,645.49	14,854.57	0.00	14,854.57

3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Քաջարանի թունելի (երկարությունը շուրջ 7.0 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք - Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքները: Նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկված ժամկետը կազմում է շուրջ 6 տարի: Մանրամասն նախագիծը պատրաստ է: Անցել է պետական համալիր փորձաքննություն (եզրակացություն No 297՝ առ 21.12.2022թ.):

Ծրագրի ֆինանսավորման հարցում Բանակցություններ են տարվում իրանական կողմի հետ՝ իրանական ընկերությունների կողմից ծրագիրը ֆինանսավորելու և շինարարական աշխատանքներն իրականացնելու շուրջ: Միաժամանակ, դիտարկվում է ծրագրի ֆինանսավորման հնարավորությունը ՀՀ պետական բյուջեի կամ այլ ֆինանսական դոնորների միջոցներով: Այս հարցի շուրջ ընթանում են համապատասխան քննարկումներ:

2022 թվականին մեկնարկել են Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրով նախատեսված աշխատանքները:



3.6 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ 60ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի իրականացման ֆինանսական աղբյուրների մասով աշխատանքներ են տարվում ՎԶԵԲ, ԱԶԲ և ԵՆԲ հետ: 2022 թվականին նախավորակավորման հայտերի գնահատման փուլն արդեն իսկ ավարտվել է, և գնահատման հաշվետվությունը ներկայացվել է դոնորների հաստատմանը, որից հետո այն կներկայացվի ծրագրի Կառավարման Խորհրդի հատատմանը: ՎԶԵԲ կողմից պատվիրվել է բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում, ինչպես նաև մանրամասն նախագծի տեխնիկատնտեսական և իրագործելիության փորձաքննություն: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և Խորհրդատու «Այ Ար Դի Ինժեներինգ» ընկերության ներգրավմամբ մասնագիտական խումբը ունեցել է մի քանի խորհրդակցություն/քննարկում Խորհրդատու «Բերնարդ Գրուպպ» և «ԱյՍի Քընսալթեն» ՀՁ նախնական հաշվետվության և նախագծի շուրջ ներկայացված դիտարկումների վերաբերյալ:

Ծրագրի ընթացիկ վիճակը. Հաշվետու տարվա ընթացքում Սիսիան-Քաջարան մոտ 60կմ հատվածի համար պատրաստվել է տեխնիկական հսկողության խորհրդատվական

ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը, ամփոփվել է ՎԶԵԲ կողմից պատվիրված բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը, ինչպես նաև մանրամասն նախագծի տեխնիկատնտեսական և իրագործելիության փորձաքննությունը: Ծրագրի շրջանակներում Սոցիալական ազդեցությունների կառավարմանը և վերաբնակեցմանը առնչվող գործընթացների շրջանակներում ՎԶԵԲ կողմից վարձված միջազգային խորհրդատու կազմակերպության կողմից պատրաստվել է հողերի օտարման և տարաբնակեցման նոր շրջանակ, որը ներկայումս գտնվում է պոտենցիալ դոնոր կազմակերպությունների կողմից ուսումնասիրման փուլում: Սույն ՀՕՏՇ հիման վրա նույն խրհրդատու կազմակերպությունը պատրաստելու է վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ):

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N 981-Ն որոշմամբ Ծրագրի նախագծի օտարման գոտու սահմաններում գտնվող հողամասերը ճանաչվել են հանրության գերակա շահ: Նշված որոշմամբ ազդակիր հողամասերի քանակը կազմել է 570 կադաստրային ծածկագիր:

ՎԳՊ պատրաստման ավարտից հետո այն ներկայացվելու է ՎԶԵԲ-ի և ՀՀ կառավարության ուսումնասիրմանն ու հաստատմանը, որից հետո անհրաժեշտ կլինի ձեռք բերել ՎԳՊ իրականացման խորհրդատվական ծառայություններ: Իսկ ՎԳՊ իրականացման ավարտից հետո անհրաժեշտություն է առաջանալու ձեռք բերել արտաքին մոնիթորինգի խորհրդատվական ծառայություններ՝ ՎԳՊ իրականացման համապատասխանության հաշվետվություն պատրաստելու և հետագայում տարածքը կապալառու կազմակերպությանը տրամադրելու նպատակով:

3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5
ԳՅՈՒՄՐՈՒ ՇՐՋԱՆՑԻԿ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ-ԲԱՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է՝ Գյումրու շրջանցիկ ճանապարհահատված՝ 23.2կմ և Գյումրի-Բավրա ճանապարհահատված՝ 37.3կմ ընդհանուր երկարությամբ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի վերակառուցում:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-5-ի նախագծումն իրականացրել է իտալական «Լոթթի Ինժեներիա» ԲԸ և «Էյ Այ Սի Փրոջեթի» ԲԸ համատեղ գործող ընկերությունը:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են հետևյալ հատվածներով՝

Գյումրու շրջանցիկ ճանապարհահատված.

- Նախատեսվում է կառուցել II տեխնիկական կարգի, 100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ, 2 երթևեկելի գոտով (մինչև 4 գոտի ընդլայնման հնարավորությամբ) ընդհանուր 23.2կմ երկարությամբ նոր ճանապարհ.
- Համաձայն նախագծի՝ կառուցվելու է 6 կամուրջ, 4 հանգույց.
- 2018թ. կազմված նախահաշվով շինարարական աշխատանքների արժեքը կկազմի շուրջ 49 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ.
- Կառավարման և խորհրդատվական ծախսերը կկազմեն մոտ 7 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընդամենը՝ 56 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Գյումրի-Բավրա ճանապարհահատված.

- Նախատեսվում է կառուցել II տեխնիկական կարգի, 100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ, 2 երթևեկելի գոտով (մինչև 4 գոտի ընդլայնման հնարավորությամբ)՝ ընդհանուր 37.3կմ երկարությամբ ճանապարհ.
- Համաձայն նախագծի՝ կառուցվելու է 12 կամուրջ, 12 հանգույց, 1 թունել (680մ երկարությամբ).
- 2018թ. կազմված նախահաշվով շինարարական աշխատանքների արժեքը կկազմի 57 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ.

- Կառավարման և խորհրդատվական ծախսերը կկազմեն մոտ 8 մլրդ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընդամենը՝ 65 մլրդ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գյումրու շրջանցիկ ճանապարհահատվածն ամբողջովին նոր կառուցվող հատված է, ուստի ունի առաջնահերթություն:

Հաշվի առնելով, որ խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են 5 տարի առաջ, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ծրագրին վերաբերող բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերը: Սույն հարցը քննարկվել է Եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչների հետ, որոնք պատրաստակամություն են հայտնել տրամադրել տեխնիկական աջակցության ֆինանսավորում:

Տեխնիկական աջակցության շրջանակներում առաջարկվել է օգտվել «Տրանսպորտի ոլորտում ներդրումների համար արևելյան գործընկերության» (EPIC) ծրագրի գործիքակազմից:



2022 թվականին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից կազմվել են ծրագրին դիմելու հայտի նախնական տարբերակները և տեխնիկական առաջադրանք: Ձեռք է բերվել պայմանավորվածություն համաձայնեցնել հայտի և տեխնիկական առաջադրանքի վերջնական տարբերակները և ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն հետագա ընթացքն ապահովելու համար:

3.8 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքը.

Ծրագրի նպատակն է ընտրված Կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել կենսական նշանակության ճանապարհային ցանցի կառավարումը:

Ակնկալվող արդյունքը՝ շուրջ 170 կմ ընդհանուր երկարությամբ կենսական նշանակության ճանապարհահատվածների հիմնանորոգումն է:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 56,221,875 $, որից



45,000,000 $ վարկային միջոց

11,221,875 $ ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում՝ 80% վարկային միջոցներից և 20% ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.8229-AM, ստորագրված՝ 11.02.2013 թվականին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 25 տարի (10 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ 6-ամսյա USD ԼԻԲՈՐ գումարած լողացող մարժա:

Ծրագրի ընթացիկ վիճակը. Ծրագրի տնտեսումների հաշվին հնարավոր է եղել, Ծրագրով նախատեսվածից բացի, լրացուցիչ վերականգնել 41,1կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ, ինչի արդյունքում Ծրագրի շրջանակներում 2013 թվականից մինչև 2017 թվականը կնքվել է 211,4կմ ընդհանուր երկարությամբ 24 ճանապարհահատվածի վերականգնման պայմանագիր:

Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներն ավարտված են:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր» Վարկ 8229-AM, այդ թվում՝	**259 749,24**	**213 556,71**	**46 192,53**	**274 731,21**	**225 559,76**	**49 171,45**
1	Շինարարական աշխատանքներ	-	-	-	-	-	-
2	Խորհրդատվություն և նախագծում	259 749,24	213 556,71	46 192,53	274 731,21	225 559,76	49 171,45
3	Ծրագրի կառավարման աջակցություն	-	-	-	-	-	-

3.9 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է ընտրված Կենսական նշանակության ճանապարհները բարեկարգելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել վարկառուի՝ ճանապարհների համար պատասխանատու համապատասխան նախարարության կարողությունները՝ կառավարելու համար կենսական նշանակության ճանապարհային ցանցը:

Ակնկալվող արդյունքները՝ շուրջ 68,74կմ ընդհանուր երկարությամբ կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ՀՀ միջպետական և հանրապետական ավտոճանապարհների վթարավտանգ տեղամասերի (ընտրված 8 ճանապարհների 15 տեղամասեր) բարելավում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 16,750,000 EUR, որից



13,400,000 EUR վարկային միջոց

3,350,000 EUR ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում՝ 80% Համաշխարհային բանկի վարկային միջոցներից և 20% ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.8957-AM ստորագրված 10.10.2019 թվականին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 25 տարի (14.5 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ 6-ամսյա EUR ԼԻԲՈՐ գումարած լողացող սպրեդ:

Ծրագրի ընթացիկ վիճակը. Ծրագրի շրջանակներում կենսական նշանակության ճանապարհների բարելավման աշխատանքների նպատակով կնքված պայմանագրերի համաձայն՝ նախատեսված 12 ճանապարհների վերականգնման աշխատանքների իրականացման մեկնարկը տրվել է 2020 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով 2021 թվականի հունվար-մարտ ամիսներին տրվել է ձմեռային դադար, որից հետո՝ ապրիլ ամսին, ճանապարհաշինական աշխատանքները վերսկսվել են: 2022 թվականի օգոստոս ամսվա դրությամբ 12 ճանապարհներից հիմնանորոգվել և շահագործման են հանձնվել 11-ը (ընդհանուր՝ 60,54կմ): Մեկ ճանապարհի՝ Մ-6-Եղեգնուտ-Դեբեդ կմ0+000-կմ7+183 ճանապարհահատվածի (8.2կմ) վերականգնման աշխատանքների իրականացման պայմանագիրը կապալառու կազմակերպության կողմից էական խախտումներ թույլ տալու պատճառով լուծվել է, և նկատի ունենալով Ծրագրի ավարտման ժամկետը՝ որոշում է կայացվել այդ աշխատանքներն ավարտին հասցնել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերով:

Հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզում Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհի Նորավանի խաչմերուկ-Գորիս-Որոտան-Սյունիք հատվածի առկա լոգիստիկ որոշակի խնդիրները՝ կանխատեսվում է, որ Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհի նշված հատվածի երթևեկության ինտենսիվությունը կտեղափոխվի, և բեռնվածությունը կընկնի ծրագրի շրջանակներում վերականգնված Մ-2-Նորավան, կմ0+000-կմ4+344 ճանապարհահատվածի վրա: Ուստի, նշված ճանապարհահատվածի երթևեկելի մասի ամրացման նպատակով կնքված նոր պայմանագրի համաձայն՝ իրականացվել են նաև ճանապարհի 4,33կմ հատվածի երթևեկելի մասի ասֆալտբետոնե պատվածքի լրացուցիչ շերտի տեղադրման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված ՀՀ միջպետական և հանրապետական ավտոճանապարհների վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացի արդյունքում կնքվել են 7 ճանապարհների 12 վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքների իրականացման 3 պայմանագրեր: Հետագայում կատարված նախագծային փոփոխությունների արդյունքում պայմանագրերում ներառվել են ևս 2 վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքներ: Սույն միջոցառման շրջանակներում իրականացվել են նաև 3,92կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների երթևեկելի մասերի նորոգման աշխատանքներ: Շինարարական շխատանքների մեկնարկը տրվել է 2022 թվականի հոկտեմբեր ամսին, աշխատանքները 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ավարտվել են: Հաշվի առնելով Ծրագրի ավարտման ժամկետը և եղանակային պայմանները՝ նախատեսված ևս 1 ճանապարհի վթարավտանգ տեղամասերի (3 տեղամաս) բարելավման աշխատանքների իրականացումը չեղարկվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, Եվրո			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր Վարկ 8957-AM, այդ թվում՝	**3 656 981,13**	**2 923 464,03**	**733 517,10**	**3 694 187,15**	**2 957 091,54**	**737 095,61**
1	Շինարարական աշխատանքներ	2 463 085,12	1 974 869,76	488 215,36	2 386 743,22	1 910 791,50	475 951,72
2	Խորհրդատվություն և նախագծում	833 426,79	660 142,70	173 284,09	949 962,23	760 062,72	189 899,51
3	Ծրագրի կառավարման աջակցություն	360 469,22	288 451,57	72 017,65	357 481,70	286 237,32	71 244,38

3.10 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ կմ38+450-կմ90+191 հատվածի հիմնանորոգում:

Ակնկալվող արդյունքները՝

- 2023թ.՝ Վանաձորից Բագրատաշեն երթևեկության տևողության կրճատում մինչև 100 րոպե՝ 2014թ. 110 րոպեի համեմատ.
- 2023թ.՝ միջին օրական երթևեկության ինտենսիվության ավելացում մինչև 3500 մեք./օր՝ 2014թ. 2800 մեք./օր-ի համեմատ.
- 2022թ.՝ ավելի քան 1 մլն տոննա բեռնափոխադրումներ Բագրատաշենի մաքսային կետով՝ 2014թ. 0,85 մլն տոննայի համեմատ.
- 2021-2022թթ. ճանապարհի երկայնքով մահվան ելքով ՃՏՊ-երի տարեկան միջին թվի կրճատում մինչև 3՝ 2014թ. 6-ի համեմատ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմաններ.

Ծրագրի բյուջե՝ 52,949,227.43 €, որից



41,395,781.40 € Վարկային միջոց

11 533 446,03 € Համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.3449-ARM, ստորագրված՝ 09.11.2016 թվականին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 22 տարի (15 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ 6-ամսյա EURIBOR+0.5% մարժա, ինչպես նաև՝ տարեկան 0,15% չմասհանված վարկի գումարի նկատմամբ:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐՆ ԵՆ՝

1. «Հորիզոն-95» ՍՊ ընկերություն և «Օբերոսլեր ԿԱՎ ՊԻԵՏՐՈՍ» ՍՊ ընկերություն համատեղ ձեռնարկություն

2. «Բլաք Սի Գրուփ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկություն

3. «Սուարդի» բաժնետիրական ընկերություն

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) ֆրանսիական «Սաֆեժ ՍԱՍ և Հիլլ Ինթերնեյշնլ էն.Վի.» ՀՁ-ն է (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը. 2022 թվականի ընթացքում շինարարական և ասֆալտապատման աշխատանքներն ընթացել են մեծ տեմպերով: Նախատեսված այլ շինարարական աշխատանքներին զուգընթաց կառուցվել է 9.8կմ ճանապարհային պատվածք: Ծրագրի սկզբից վերականգնվել է 51.73կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ: Ծրագրի ֆիզիկական առաջընթացը կազմել է 95.01%:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, Եվրո			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր այդ թվում՝	11,181,344.78	9,082,198.73	2,099,146.05	11,869,380.79	9,578,723.75	2,290,657.04
1	Շինարարական աշխատանքներ, Խորհրդատվություն և նախագծում	10,647,486.72	8,867,518.24	1,779,968.48	11,326,750.51	9,355,072.66	1,971,677.85
2	Պահպանման ծախսեր	217,377.55	214,680.49	2,697.06	226,149.77	223,651.09	2,498.68
3	դրամաշնորհներ ՀՕՏԾ-ի գծով	316,480.51	0.00	316,480.51	316,480.51	0.00	316,480.51

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկ ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2022թ.



3.11 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները.

Ծրագրի նպատակն է ՀՀ հյուսիսային սահմանի արդիականացում և ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն-Սադախլո անցման կետում նոր կամրջի կառուցումը:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ՀՀ պետական սահմանի Բագրատաշեն սահմանային անցման կետի թողունակության ավելացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

Ծրագրի բյուջե՝ 7,730,581.87 €, որից



6,100,000.0 € Վարկային միջոց

1,630,581.87 € Համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում ՎԶԵԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ.

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ստորագրվել է 23.11.2012 թվականին Հյուսիսային սահմանի արդիականացման ծրագրի համար Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև, որից հետո 2014 թվականի դեկտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև կնքվել է միջկառավարական համաձայնագիր, որով ստեղծվել է միջկառավարական հանձնաժողով՝ ծրագիրը ՀՀ և Վրաստանի կողմից համատեղ իրականացնելու նպատակով:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 15 տարի է(4 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ վարկի տոկոսները հաշվարկվում են լողացող տոկոսադրույքով՝ 6-ամսյա EURIBOR + 1% մարժա:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ իրանական «Թունել Սադ Արիանա» ՓԲ ընկերությունն է:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) կորեական «Սուսունգ էնժեներինգ» և «Կորեա Քընսալթանթս Ինթերնեյշնլ» Հ/Ձ է:

2022Թ. ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԵՎ 2022Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 19_ԻՆ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄՐՋԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ: ԱՅՆ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ:

Ծրագրի ընթացքը. 2017 թվականի նոյեմբերի 2-ին սկսվել են կամրջի նախագծման աշխատանքները, որոնց արդյունքում կապալառուի կողմից ներկայացվել են նախագծի երեք տարբերակներ, որոնցից ընտրվել է նախալարված 50 ամրաններից բաղկացած, 5 թռիչքներով, 160մ երկարությամբ, 4 երթևեկելի գոտիներով երկու կամուրջների տարբերակը:Ընտրված տարբերակի նախագծանախահաշվային փաստաթղթերն անցել են պետական և հատուկ համալիր փորձաքննություններ, ստացել դրական եզրակացություն: Դրական եզրակացություններ են ստացվել երկու երկրների արտագերատեսչական փորձաքննական ընկերություններից կողմից: 2021 թվականի ապրիլի 15-ին տեղի է ունեցել հայ-վրացական միջկառավարական համատեղ նիստ, որով ընդունվել է նախագիծը, և տրվել շինարարության մեկնարկը: Այնուհետև, նույն թվականի հուլիսի 9-ին, տեղի է ունեցել շինարարության մեկնարկի պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են երկու երկրների կառավարությունների ներկայացուցիչները, ոլորտը համակարգող նախարարները, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Ծրագրի շինարարության ընթացքն իրականացվել է պայմանագրային ժամկետի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում անցակետում տեղադրվել է նաև 30 մետր բարձրություն ունեցող 6Х10մ չափերով ՀՀ դրոշ, վերանորոգվել և ամրացվել է նաև անցակետի հին կամուրջը՝ որպես այլընտրանքային և վթարային անցակետ:

2022 թվականի օգոստոսի 14-ին կամուրջը հանձնվել է շահագործման ծրագրի տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից: Կամուրջն իր որակական և տեխնիկական բնութագրերով համապատասխանում է միջազգային ստանդարտներին և նորմերին: 2022 թվականի օգոստոսի 19-ին տեղի է ունեցել նոր կամրջի պաշտոնական բացման միջոցառումը՝ երկու երկրների վարչապետների մասնակցությամբ:

Ծրագրի արժեքի Հայաստանի Հանրապետության մասը կազմել է մոտ 4,500,000 եվրո, որն ամբողջ արժեքի 50%-ն է, ընդ որում, վերոնշյալ գումարի 20%-ի ֆինանսավորումն իրականացվել է պետական բյուջեի միջոցներով:

Ընթացքի մեջ է թերությունների հայտնաբերման և վերացման ժամկետը, որի համար նախատեսված է 2 տարի, և որի ամբողջ պատասխանատվությունը պայմանագրային հիմունքներով կրում է ծրագրի կապալառու կազմակերպությունը:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2022Թ.

NN	Բաղադրիչի անվանումը	2022թ. ընթացքում կատարված աշխատանքները, Եվրո			2022թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, Եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	"Բագրատաշեն" անցման կետի կամրջի վերակառուցում, այդ թվում՝	**1,709,306.12**	**1,300,025.98**	**409,280.14**	**1,744,105.58**	**1,376,003.96**	**368,101.62**
1	շինարարական աշխատանքներ մաս	1,454,215.71	1,211,846.42	242,369.29	1,317,069.47	1,111,252.50	205,816.96
2	խորհրդատվական ծառայություններ մաս	105,815.47	88,179.56	17,635.91	282,436.48	264,751.46	17,685.02
3	Միանվագ կոմիսիոն վճար	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
4	այլ ծախսեր	149,274.94	0.00	149,274.94	144,599.63	0.00	144,599.63
5	հողերի օտարում և վերաբնակեցում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները			Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	"Բագրատաշեն" անցման կետի կամրջի վերակառուցում, այդ թվում՝	**4,771,973.03**	**3,467,543.24**	**1,304,429.79**	**4,713,012.68**	**3,400,320.77**	**1,312,691.90**
1	շինարարական աշխատանքներ մաս Ա	3,427,561.34	2,856,301.11	571,260.23	3,256,567.86	2,690,612.56	565,955.29
2	խորհրդատվական ծառայություններ մաս Բ	609,890.56	508,242.13	101,648.43	728,098.98	606,708.21	121,390.77
3	Միանվագ կոմիսիոն վճար	103,000.00	103,000.00	0.00	103,000.00	103,000.00	0.00
4	այլ ծախսեր	629,833.94	0.00	629,833.94	623,658.65	0.00	623,658.65
5	հողերի օտարում և վերաբնակեցում	1,687.19	0.00	1,687.19	1,687.19	0.00	1,687.19



3.12 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի համագործակցության շրջանակներում:

ԵՄ կողմից Հարևանության ներդրումային գործիքով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Ներդրումային Բանկի միջև 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ստորագրվել է թիվ FI 91.498 դրամաշնորհային համաձայնագիրը՝ Ծրագիրն իրականացնելու համար:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել մի շարք միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ, անվտանգության էլեմենտներով կահավորում, ինչպես նաև՝ ճանապարհների նախագծմամբ զբաղվող մի շարք հաստատություններում ճանապարհային անվտանգության մասով աուդիտորական կարողությունների զարգացման դասընթացի կազմակերպում:

Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 4.250.000 մլն Եվրո:

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 21.12.2023թ.

Ակնկալվող արդյունքը.

✓ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների թվով 46 վթարավտանգ տեղամասերի երթևեկության անվտանգության բարելավման աշխատանքներ,

✓ Միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթացների իրականացում,

✓ Մ6 միջպետական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգության իրազեկման վահանակների տեղադրում,

✓ ՀՀ գործող ճանապարհային անվտանգության ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ առաջարկների փաթեթի մշակում:

Իրականացված աշխատանքներ. Ծրագրի մեկնարկից մինչև 2022 թվականի ավարտը, կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն, բարելավվել և շահագործման են հանձնվել Մ-2, Մ-3, Մ-4, Մ-5, Հ-8, Հ-69/Հ-21

միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների թվով 21 վթարավտանգ տեղամասեր:

Ճանապարհային անվտանգության ՀՀ գործող ստանդարտների և նորմերի արդիականացման վերաբերյալ աշխատաժողովը կազմակերպվել է 2021 թվականին: Խորհրդատուի կողմից մշակված փաստաթուղթն ընդունվել է Հիմնադրամի կողմից:

Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև ճանապարհային անվտանգության աուդիտի վերապատրաստման դասընթաց, որի մասնակիցներից 19-ը ստացել են ճանապարհային անվտանգության աուդիտորի որակավորում:

Մ-6 ճանապարհի վրա տեղադրվել են ճանապարհային անվտանգության իրազեկման 2 վահանակ:

Ընթացիկ վիճակը. Կապալառու կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ ներկայում ընթանում են Մ-4, Մ-16 և Հ-30 միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների թվով 10 վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2023 թվականի սեպտեմբեր ամսին:

Նախատեսվող աշխատանքներ. Ծրագրի շրջանակներում նախատեսվում են նաև Մ-2, Մ-3, Մ-12, Հ-17 միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև՝ ՀՀ Արմավիրի մարզի Նորապատի տրանսպորտային

հանգույցի (Մ-5/Հ-17 խաչմերուկ) թվով 16 վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքներ: Շինարարական աշխատանքների իրականացման նախագծման աշխատանքներն ավարտվել են, որոնց համաձայն, հաշվի առնելով այդ ճանապարհների վթարավտանգ տեղամասերի առանձնահատկությունները և բնութագրերը՝ նախատեսված են հետիոտնային մայթերի, անցումների և արհեստական անհարթությունների կառուցման, արգելափակոցների տեղադրման, նշագծման, ճանապարհային նշանների, ջրահեռացման համակարգի բարելավման և այլ աշխատանքներ:

Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2023 թվականի վերջին:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները
31.12.2022թ. դրությամբ

NN	Բաղադրիչներ, ենթածրագրերը և կատեգորիաներ*	Ծրագրով նախատեսված ծախսերը			Ծրագրի սկզբից կատարված աշխատանքները			Ծրագրի սկզբից կատարված փաստացի վճարումները (ԵՎՐՈ)		
		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
			Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
1	2	3	4	5	7	8	9	11	12	13
	Ընդամենը այդ թվում՝	**4,887,500.00**	**4,250,000.00**	**637,500.00**	**2,192,341.04**	**1,826,950.87**	**365,390.17**	**2,130,610.43**	**1,790,382.47**	**340,227.96**
1	շինարարական աշխատանքներ	4,887,500.00	4,250,000.00	637,500.00	2,192,341.04	1,826,950.87	365,390.17	2,130,610.43	1,790,382.47	340,227.96

4. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆՃԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացմանն օժանդակություն: Նշված կանոնադրական նպատակից ելնելով՝ Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի ուսումնասիրություն. Ավտոմոբիլային ճանապարհների հետազոտման նպատակն է բացահայտել ասֆալտբետոնե ծածկի առկա թերությունները՝ վերականգնման ռազմավարություն մշակելու համար: Ասֆալտբետոնե ծածկի ուսումնասիրությունն իրականացվում է միջազգային անհարթության գործակցի IRI (մմ/մ) որոշման և ակնադիտական հետազոտման միջոցով:

Անհարթության գործակիցը (IRI) որոշվում է DYNATEST 5051 Mk-IV RSP համակարգի միջոցով, որը տեղակայված է RENAULT DUSTER մակնիշի ավտոմեքենայի վրա:

Ակնադիտական հետազոտման միջոցով որոշվում են ասֆալտբետոնե ծածկի ճաքերի (երկայնական (մ^2), լայնական (մ^2), ցանցաձև (մ^3), փոսերի (մ^3), մաշվածության մակերեսի (մ^2) և քայքայված եզրամասի (մ^2) ծավալները: Ակնադիտական հետազոտման և IRI (մմ/մ) միջազգային անհարթության գործակցի արդյունքները գրանցվում են հետազոտման ամփոփագրում: Անհրաժեշտության դեպքում կառուցվում են անհարթության, ճաքայնության, փոսայնության, կառուցվածքի փոփոխության և եզրամասի քայքայման գրաֆիկները:

Իրականացվել են ճանապարհահատվածների ուսումնասիրման համար անհրաժեշտ նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, ինչպես նաև պարբերաբար իրականացվել են միջազգային անհարթության գործակիցը չափող սարքավորումների կարգաբերման աշխատանքներ:

2022 թվականի ընթացքում ուսումնասիրվել են միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհահատվածներ՝ 1603.73կմ ընդհանուր երկարությամբ (ներառյալ I տեխնիկական կարգը), այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 1134.3կմ, որից 11.4կմ՝ I տեխնիկական կարգի, և հանրապետական նշանակության՝ 469.43կմ ավտոմոբիլային ճանապարհ:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
	1600կմ	1603.73կմ

Երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում. Հայաստանի Հանրապետության 3 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 5 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող 5 առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Ստացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Կատարվել են Հայաստանի Հանրապետության 3 միջպետական ավտոճանապարհների 5 կետերում տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետու տարում մշտական տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 132 այցելություն 106 կետերում:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
հաշվեկետ	102	106
այցելություն	125	132

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը. Հիմնադրամի մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

- տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին (առկա և առցանց),
- մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին (առկա և առցանց):

2022 թվականի ընթացքում Հիմնադրամի մասնագետների կողմից հավաքագրված, ամփոփված և համադրված տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծությունների մոդելի միջոցով կազմվել են ուսումնասիրված ճանապարհահատվածների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնման ծրագրեր:

Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, գույքագրվել և տեսաձայնագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհահատվածներ և տրանսպորտային հանգույցներ՝ շուրջ 602.44 կմ ընդհանուր երկարությամբ (ներառյալ I տեխնիկական կարգը), այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 157.34կմ, որից 15.4կմ՝ I տեխնիկական կարգի, և հանրապետական նշանակության՝ 445.1կմ ավտոմոբիլային ճանապարհ:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
	600կմ	602.44կմ

Իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալների ամփոփում և վերլուծություն, ինչպես նաև տվյալների շտեմարանի վարում:

Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում. Հաշվետու տարվա ընթացքում երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված

առաջարկությունների ներկայացման նպատակով կատարվել են տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքներ: Մասնավորապես՝

1. «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից (այսուհետև՝ Ծառայություն) ակնկալվող ՃՏՊ տվյալների բացակայության պայմաններում («Ճանապարհային ցանցի կառավարման համակարգի» և Ծառայության շտեմարանների ինտեգրումը ընթացքի մեջ է)՝ վթարայնության, ճանապարհներին երթևեկության անվտանգության և կազմակերպման անբավարար վիճակների վերաբերյալ տեղեկատվություն հիմնականում ստացվել են ստորև ներկայացվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական ծառայությունների, կազմակերպությունների, քաղաքացիների, ինչպես նաև կապալառու կազմակերպությունների (հիմնականում ճանապարհային երթևեկության տեխնիկական միջոցների գողացման, վնասելու փաստերի վերաբերյալ) կողմից հաղորդագրությունների, դիմումների, առաջարկությունների և այլ գրագրությունների ձևով: Յուրաքանչյուր դեպքում կատարվել են ուսումնասիրություններ, և տրվել են պարզաբանումներ, կարծիքներ, բարելավման առաջարկություններ: Ճանապարհային ոստիկանության կողմից տրված ՃՏՊ ոչ լիարժեք տվյալների հիման վրա իրականացվել է վերլուծական աշխատանք՝ սինթեզելով ՃՏՊ հիմնական ցուցանիշները ըստ ճանապարհների:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում ճանապարհների անվտանգության ծառայության ինժեներների կողմից 61 նախագծերի վերաբերյալ տրվել են մասնագիտական եզրակացություններ: Եզրակացությունները ներկայացվել են նախագծային կազմակերպություններին՝ նախագծերում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

Հայաստանի ճանապարհների անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում 11 նախագծերի վերաբերյալ տրվել են մասնագիտական եզրակացություններ:

3. Մ-6, Վանաձոր – Ալավերդի – Վրաստանի սահման ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում առկա նախագծերի վերաբերյալ տրվել են մասնագիտական եզրակացություններ:

4. ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող վարչական գործերով ապացույցներ պահանջելու վերաբերյալ պարզաբանումներ և տեղեկատվություններ են տրվել վարչական դատարանի 35 որոշումների կապակցությամբ:

5. Ճանապարհային երթևեկության անվտանգության ուղղությամբ միջոցառումներն ակտիվացնելու, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի N 1902-Լ որոշման ռազմավարության ծրագրի 53-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 1206-Ն, 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1699-Ն, 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն, 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշումներում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, ներկայացվել են Նախարարության ճանապարհաշինության ոլորտի քաղաքականության վարչություն, կազմակերպվել է դրանց քննարկումը՝ շահագրգիռ մարմինների դիրքորոշումները, կարծիքները պարզելու համար:

6. Իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ միջազգային գործընկերների հետ ճանապարհների անվտանգության ապահովման և կազմակերպման ուղղությամբ առկա խնդիրների, դրանց լուծման համաշխարհային փորձի ներդրման հարթակներում: Մասնավորապես, ՃԵԿ և ՃԱԱ մասերով առաջարկություն է ներկայացվել տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցությունների բնագավառում:

7. Երթևեկության անվտանգության և կազմակերպման բարելավման նպատակով ներկայացվել է 63 կարծիք, 26 պարզաբանում (այդ թվում՝ 3-ը արհեստական անհարթությունների կիրառման վերաբերյալ), 23 տեղեկատվություն, 26 առաջարկություն, 10 դեպքում կապալառու կազմակերպություններին հանձնարարականներ են տրվել ճանապարհային նշանների տեղակայման և տեղափոխման նպատակով:

7.1. Մ-14, /Մ-4/ Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ42+700, կմ49+600 և կմ56+100 տեղամասերում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությանը պատկանող երկաթուղային գծանցի հարակից տեղամասերում ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով կատարվել է ակնադիտական ուսումնասիրություն, կազմվել են ճանապարհային երթևեկության բարելավման գծապատկերներ և կապալառու կազմակերպությանը տրվել են համապատասխան հանձնարարականներ:

7.2. Մ-2, Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի սահման և Մ-12, /Մ-2/ (Գորիս) - Արցախի Հանրապետության սահման ավտոճանապարհների հատման տեղամասի ուսումնասիրման արդյունքում կազմվել է մասնագիտական եզրակացություն, և ներկայացվել է «Հայաստանի ճանապարհների անվտանգության բարելավման» ծրագրի համապատասխան նախագծային կազմակերպությանը:

7.3. Կատարվել է Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման և Հ-21, /Հ-75/ - Հոռոմ – Արթիկ - /Մ-3/ (Ալագյազ) ավտոճանապարհների վթարավտանգ հատման տեղամասի ակնադիտական ուսումնասիրություն: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը՝ կազմվել է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման գծապատկեր: Կապալառու կազմակերպությանը տրվել է հանձնարարական շահագործման բավարար պայմանների դեպքում ներկայացված գծապատկերի համաձայն ճանապարհային նշաններ տեղակայելու վերաբերյալ:

7.4. Ճանապարհների անվտանգության բարելավման նպատակով կատարվել են 28 ակնադիտական ուսումնասիրություն, այդ թվում՝ 5 կամուրջների վիճակների բարելավում կազմակերպելու կապակցությամբ:

8. «Գեոռիսկ գիտահետազոտական ընկերություն» ՓԲ ընկերության կողմից «ՀՀ ճանապարհային ենթակառուցվածքներին սպառնացող բնական աղետների ռիսկերի գնահատման տեխնիկական աջակցություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման շրջանակներում առաջարկվել է համագործակցություն քարաթափման կանխարգելման ուղղությամբ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ: Նշված միջոցառումների իրականացման շրջանակներում տրվել է մեկ առաջարկություն, մեկ

կարծիք, երկու կապալառու կազմակերպություններին տրվել են քարաթափման վտանգի վերաբերյալ ճանապարհային նշանների տեղակայման հանձնարարականներ:

9. Նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ տրվել է 11 կարծիք, մեկ համաձայնեցում:

10. Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման միջպետական խորհրդից ստացված 2 ստանդարտների փոփոխությունների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և դիտողություններ: «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերում փոփոխություններ ներդնելու նպատակով կատարվել են առաջարկություններ:

11. ՀՀ ավտոճանապարհներով իրականացվող ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռներն անվտանգ փոխադրելու նպատակով երթուղիների ընտրության վերաբերյալ տրվել է 97 եզրակացություն:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
այցելություն	15	19

5. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հիմնադրամի կողմից իրականացվում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում, ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի մասնագետների կողմից ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների պատշաճ սպասարկման ապահովման նպատակով իրականացվել է կապալառուների կողմից իրականացված ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների նկատմամբ մասնագիտական հսկողություն հետևյալ մարզերում.

Մարզի անվանումը	*Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ*	
	Ամառային	*Ձմեռային*
Արագածոտն	282.08	273.19
Արարատ	204.53	243.50
Արմավիր	171.78	214.8
Գեղարքունիք	302.84	392.41
Կոտայք	225.45	318.48
Լոռի	377.32	389.02
Շիրակ	234.20	271.50

Սյունիք	430.70	497.15
Վայոց ձոր	178.60	239.0
Տավուշ	347.94	386.50
ԸՆԴԱՄԵՆԸ	**2755.44**	**3225.55**

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է ապրիլի 1-ից նոյեմբերի 16-ը: Ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածն է նոյեմբերի 16-ից մինչ հաջորդ տարվա մարտի 31-ը:

Ձմեռային պահպանման ժամանակահատվածում կազմակերպվել է շուրջօրյա հերթապահություն ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հերթապահությունն իրականացվել է հետևյալ գրաֆիկով՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 18^{00} մինչև հաջորդ օրվա 9^{00}
- ոչ աշխատանքային և տոնական օրերին՝ շուրջօրյա:

Ամենամսյա դիտարկումների և հսկողության ընթացքում տրվել են հանձնարարականներ տվյալ տարածաշրջանը սպասարկող կազմակերպության ներկայացուցիչներին, ինչպես նաև կատարվել են համապատասխան գրառումներ գրանցամատյաններում, որոնց հիման վրա ընդունվել են կապալառու կազմակերպությունների կատարած ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները:

Հիմնադրամի կողմից իրականացվում է նաև ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում, առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի մասնագետների կողմից միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվել է մասնագիտական հսկողություն.

- **Թունելներ՝ 3 հատ**
- **Կամուրջներ՝ 5 հատ**
- **Պարսպող համակարգերի պահպանում և վնասված հատվածների վերականգնում՝ 789.675կմ**
- **Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշում:**

2022թ.	Նախատեսված	Փաստացի
	15 այցելություն	15 այցելություն

Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջին նորոգման ենթակա ճանապարհահատվածների ուսումնասիրություններ և թերությունների ակտերի կազմում:

Կազմվել են միջին նորոգման թերությունների ակտեր, և իրականացվել է շուրջ 153կմ ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքների հսկողություն:

Վերանորոգման աշխատանքների հսկողության արդյունքում ապահովվել է ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների պատշաճ իրականացումը:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
Ուսումնասիրություն, այցելություն	15	19
Հսկողություն, այցելություն	160	165

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի իրականացման աշխատանքների մասնագիտական աջակցություն. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ պետական բյուջեի 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21001 «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և 21002 «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառումների ապահովման նպատակով սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթներից բխող աշխատանքներ: Մասնավորապես, «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով 2022 թվականին իրականացվել են շուրջ 662կմ ընդհանուր երկարությամբ թվով 99 ճանապարհահատվածների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման և ներկայացման, գնման գործընթացների աջակցման և կազմակերպման, դրանց համար ֆինանսական միջոցների վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման, հայտերի կազմման և ներկայացման գործընթացներ:

Հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի մասով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 486.7կմ ընդհանուր երկարությամբ 79 ճանապարհահատվածների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և շուրջ 457կմ ընդհանուր երկարությամբ 70 ճանապարհահատվածների նախագծերի փորձաքննության ծառայությունների մշտադիտարկման և հանձնման-ընդունման գործընթացներ: Իրականացվել են նաև 7 տրանսպորտային օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներ:

Իրականացվել են շուրջ 378.4կմ ընդհանուր երկարությամբ 78 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման հայտերի կազմման, ներկայացման և գնման գործընթացներին աջակցման, 16 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացների աջակցման և կազմակերպման

գործընթացներ: Իրականացվել են նաև այդ ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար ֆինանսական միջոցների վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման համար հայտերի կազմման և ներկայացման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 310.4կմ ընդհանուր երկարությամբ 76 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների, ներառյալ 2021թ. սկսված և 2022թ. տեղափոխված 54.4կմ ընդհանուր երկարությամբ 20 ճանապարհահատվածների և ՀՀ Սյունիքի մարզում նախատեսված ճանապարհահատվածների կառուցման և վերակառուցման աշխատանքների մշտադիտարկում, կատարված աշխատանքների գնահատում, կատարված աշխատանքների հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպում և մասնակցում:

Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21001 «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում 2022թ.-ին կատարվել են շուրջ 301.5կմ ընդհանուր երկարությամբ միջպետական, հանրապետական, մարզային (տեղական) նշանակության ճանապարհահատվածների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման, իսկ «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում կատարվել են 6 տրանսպորտային օբյեկտների (5 կամուրջ և 1 տրանսպորտային հանգույց /հենապատ/) վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները:

Ծրագրում ներառված ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման, փորձաքննության ծառայությունների, շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար ֆինանսական միջոցներ նախատեսելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և շրջանառվել են ՀՀ կառավարության որոշման մի շարք նախագծեր:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային ամբողջական փաթեթները, և հայտերի գնահատման նպատակով ներկայացվել են մասնագիտական դիրքորոշումներ:

2022թ.	Նախատեսված	Փաստացի
Հսկողություն, այցելություն	150	161

Լաբորատոր փորձաքննությունների իրականացում. Հիմնադրամը ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի և/կամ ճանապարհների վերականգնման, պահպանման պատասխանատու ստորաբաժանման առանձին հանձնարարականների դեպքում իրականացնում է լաբորատոր փորձարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել են լաբորատոր սարքավորումների և գործիքների վիճակի կարգաբերում, մաքրում, թերությունների վերացում.
- Մասնագիտական խորհրդատվական աջակցություն է տրամադրվել շինարարական մի շարք կազմակերպությունների ճանապարհաշինարարության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ: Շինարարության համար պարբերաբար իրականացվել է հսկողություն շինարարական նյութերի օգտագործման մասով: Թույլատրվել է օգտագործել միայն այն նյութերը, որոնց լաբորատոր փորձարկումները տվել են դրական արդյունք:

Կատարվել են շինարարական նյութերի հետազոտական աշխատանքներ (խճի, կոպիճի, ավազի, բիտումի, հանքային փոշու և ա/բ-ի)՝ 110 փորձարկում:

Փորձարկումների արդյունքները տրամադրվել են լիազոր մարմնին և համապատասխան կապալառուին:

Լաբորատորիայի կողմից իրականացված գործողությունները նպաստել են ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի պահանջվող որակի ապահովմանը:

2022թ.	Նախատեսված (հատ)	Փաստացի (հատ)
Հանուկների հանում և տեղափոխում	78	103
Փորձարկումներ	105	110

6. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

➢ ***Բնապահպանական մասով.*** Հաշվետու ժամանակահատվածում ներքոնշյալ ծրագրերի իրականացման շրջանակներումում Հիմնադրամի բնապահպանության հարցերով մասնագետների կողմից իրականացվել են մշտադիտարկման շրջայցեր՝ բնապահպանական, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջների, ինչպես նաև բնապահպանական կառավարման պլաններով ամրագրված պահանջների համապատասխանության վերահսկողություն իրականացնելու, առկա վիճակն ուսումնասիրելու, խնդիրներին ծանոթանալու և լուծումներ առաջարկելու նպատակով: Ծրագրերն են՝

- «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 3 Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածներ,
- «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի» Թումանյան-Բագրատաշենի մաքսային անցակետ հատված,
- «Հայաստանի կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի տեղամասեր,
- «Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի նոր կամրջի շինարարության ծրագրի» տեղամաս,
- «Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրի» տեղամասեր:

Բոլոր ծրագրերն ունեն Շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատմանը վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ: Կախված շրջակա միջավայրի վրա ազդեցության չափից՝ ծրագրերից որոշներն ունեն նաև ՇՄԱԳ օրենքով նախատեսված փորձաքննական դրական եզրակացություն: Համապատասխան փաստաթղթերը հրապարակված են Հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Շինարարական հրապարակներում բնապահպանի կողմից դիտարկվում են շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարման պայմանները (աշխատանքային անվտանգությունը, հատուկ համազգեստ, ակնոցներ, սաղավարտ կրելը, առաջին բուժօգնության դեղարկղի, կրակմարիչների, սանիտարական պայմանների առկայությունը և այլն): Հատուկ ուշադրություն է դարձվում շինարարական հրապարակում առողջության, անվտանգության ապահովմանը, շինհրապարակների կահավորմանը, աղմուկի և փոշու, թրթռման թույլատրելի մակարդակին, ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելմանը, բուսականության հատման և տնկման աշխատանքներին, թափոնների կուտակմանը և պարբերաբար հեռացմանը: Բացի այդ, ստուգվում է աշխատանքային ճամբարների, բետոնի և ասֆալտի գործարանների առկայությունը և վիճակը, հողային հանույթի տեղամասերը, հողի բերրի շերտի և հողային թափոնների տեղադրման վայրերը: Մոնիթորինգի է ենթարկվում նաև կազմված փաստաթղթերի որակը: Հայտնաբերված խնդիրների լուծման համար Հիմնադրամի հանապաատսխան մասնագետի կողմից առաջարկվում է ուղղիչ գործողությունների պլան, ինչի իրականացումը ևս ենթարկվում է մոնիթորինգի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև պլանավորվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 4 Սիսիան-Քաջարան և Քաջարան-Ագարակ հատվածների նախապատրաստական աշխատանքների ուսումնասիրություն (բնապահպանական փաստաթղթերի վերանայում, հաշվետվությունների կազմում և այլն):

- ***<u>Սոցիալական պաշտպանության մասով.</u>*** ՀՀՃՄՆ Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում շարունակվել են Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրերի կազմման և դրանց իրականացման աշխատանքները: Մասնավորապես, ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 2-ի շրջանակներում ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի N622-Ն որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների, ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 4, Քաջարան-Ագարակի հատվածի համար ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 851-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների, ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 4, Սիսիան-Քաջարան հատվածի համար ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի

N 981-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների, ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 3-ի շրջանակներում Լանջիկ - Գյումրի ճանապարհահատվածի համար ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 18-ի N 1302-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների և ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 3-ի շրջանակներում Թալին - Լանջիկ ճանապարհահատվածի համար ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1462-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 2-ի, 3-ի և 4-ի շրջանակներում մեկնարկել է հանրության գերակա շահ ճանաչված հողամասերի օտարման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 2-ի շրջանակներում պատրաստված Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 2-ի և լրացում 3-ի իրականացման աշխատանքները հասցվել են ավարտին: Նույն ժամանակահատվածում մեկնարկել են ՀՀՃՄՆ Ծրագրի Ծրագիր 3-ի շրջանակներում Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի իրականացման աշխատանքները:

Միաժամանակ, Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (կմ38+450 - կմ90+191 հատված) վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում ավարտին են հասցվել Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի և ուղղիչ գործողությունների պլան 4-ի իրականացման աշխատանքները, որոնց համար պատրաստված համապատասխանության հաշվետվությունները հաստատվել են ԱԶԲ կողմից:

7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2022 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հիմնադրամն ունի 134 հաստիքային միավոր:

Մեծապես գնահատելով Հիմնադրամի աշխատակիցների մասնագիտական գիտելիքները և հմտությունները, կարևորելով Հիմնադրամի դերը վերջիններիս մասնագիտական կարողությունների հետևողական և շարունակական կատարելագործման հարցում՝ Հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

2022 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են հետևյալ վերապատրաստումները, սեմինար-քննարկումները և աշխատաժողովները.

1. Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) ֆինանսավորմամբ իրականացվել է «Գնումներ և պայմանագրային կառավարում» (Procurement and Contract Administration) թեմայով աշխատաժողովը, որի ընթացքում ԱԶԲ փորձագետը ներկայացրել է ԱԶԲ ընթացակարգով իրականացվող մրցութային գործընթացների և պայմանագրերի կառավարման առանձնահատկությունները.

2. ԱԶԲ Սոցիալական զարգացման մասնագետների կողմից անցկացվել է ԱԶԲ երաշխիքների անվտանգության քաղաքականության վերաբերյալ սեմինար-քննարկում, որի ընթացքում ներկայացվել են երաշխիքների անվտանգության քաղաքականության կիրառման շրջանակը, տարաբնակեցման քաղաքականության հիմնական սկզբունքները, իրականացման ընթացակարգային պահանջները և մի շարք երկրների փորձը.

3. ԱԶԲ-ի կողմից կազմակերպվել է «Ճանապարհային ակտիվների կառավարում» թեմայով (Road Assets Management under Armenia-Georgia Border Regional Road (M-6 Vanadzor-Bagratashen)) վերապատրաստման դասընթացը, որի ընթացքում ներկայացվել են ճանապարհային ակտիվների ռազմավարական ուղղությունները, արդյունավետության կառավարման շրջանակը, ինչպես նաև ճանապարհային ակտիվների գույքագրման, ճանապարհների վիճակի գնահատման և ռիսկերի կառավարման հետ կապված թեմաներ.

4. Մասնակցություն «Ճանապարհային անվտանգության կարողությունների զարգացման ծրագիր. Ասիա-Խաղաղօվկիանոսյան երկրներում ճանապարհատրանսպորտային պատահարներից մարդկային կյանքների փրկություն» թեմայով (Road Safety Capacity Building Programme: Helping Save Lives from Road Crashes in Asia-Pacific) առցանց կազմակերպված աշխատաժողովին.

5. Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) ֆինանսավորմամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման» ծրագրի ճանապարհային անվտանգության կրթական ենթաբաղադրիչի իրականացման շրջանակներում կազմակերպվել է «Երեխաները և ճանապարհային երթևեկությունը: Ճանապարհային անվտանգության կրթության կարևորությունը» (“Kids and Traffic. Importance of Road Safety Education") թեմայով աշխատաժողով, որը նպատակ ուներ բոլոր շահագրգիռ պետական մարմինների և միջազգային զարգացման գործընկեր կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել ճանապարհային անվտանգության ապահովման ոլորտում կրթական ծրագրերի իրականացման կարևորության վրա՝ շեշտադրում կատարելով ճանապարհներից օգտվողների խոցելի խմբերի՝ հատկապես երեխաների շրջանում, ճանապարհային անվտանգության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Աշխատաժողովին մասնակցել են մի շարք պետական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ներգրավված դպրոցների ուսուցիչներ և աշակերտներ.

6. Հիմնադրամի մասնագետները մասնակցել են Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակում իրականացված «Ծրագրի ժամանակացույցի պլանավորում և կառավարում» թեմայով վերապատրաստման դասընթացներին.

7. Հիմնադրամի մասնագետները մասնակցել են ԱԶԲ-ի կողմից կազմակերպված «Ներդրումային ծրագրերի որոշումների կայացման բազմաչափանիշ վերլուծություն» թեմայով վերապատրաստման դասընթացներին.

8. ԱԶԲ կողմից կազմակերպվել է «Ինժեներական երկրաբանություն» թեմայով վերապատրաստման դասընթաց: Դասընթացը նպատակ ուներ ճանապարհային ծրագրեր իրականացնող աշխատակիցներին ներկայացնել ինժեներաերկրաբանական

ոլորտի կարևոր գործնական խնդիրները: Մասնավորապես, խնդիրները վերաբերում էին հողերի ֆիզիկամեխանիկական հատկություններին և որոշման եղանակներին, կառուցվածքային անկայուն հողերի խնդիրներին, դրանց ինժեներաերկրաբանական գնահատման, հողերի դինամիկ և սեյսմակայության խնդիրներին և այլն.

9. ՀԲ կողմից կազմակերպվել է «Կատարողականի վրա հիմնված ճանապարհաշինարարական պայմանագրեր» թեմայով առցանց վերապատրաստման դասընթաց: Դասընթացը նախատեսված է եղել ճանապարհային ոլորտի տեխնիկական մասնագետների համար, ովքեր ցանկանում են ձեռք բերել լրացուցիչ գիտելիքներ նշված թեմայի շրջանակներում.

10. Հիմնադրամի աշխատակիցների համար կազմակերպվել է Microsoft office Excel իմացության խորացված դասընթաց.

2022 թվականին վերապատրաստվել է Հիմնադրամի՝ ճանապարհային ոլորտի մասնագետների ավելի քան 60 տոկոսը:

Միաժամանակ, ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ինքնագնահատման նպատակով մշակվել և Հիմնադրամին և ճանապարհային ոլորտում գործունեություն ծավալող նախագծող, տեխնիկական հսկողություն և շինարարություն իրականացնող կազմակերպություններին է ներկայացվել ինքնագնահատման հարցաթերթիկ. վերջիններիս կողմից ներկայացված արդյունքների հիման վրա կազմվելու է ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ծրագիր:

8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2022 թվականի ընթացքում դատարանի վարույթ է ընդունվել Հիմնադրամի դեմ ներկայացված 3 հայցադիմում: Նախորդ տարիներին հարուցված և 2022 թվականին ընթացիկ կարգավիճակում է գտնվում 16 դատական գործ:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր Ծրագիր 2-ի շրջանակներում Հիմնադրամի կողմից հայցադիմումներ են ներկայացվել գերակա հանրային շահ ճանաչված 36 միավոր հողամասերի օտարման պահանջով:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Իր հիմնական գործունեությանը զուգընթաց «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն ակտիվորեն լուսաբանում է ճանապարհային ոլորտի ծրագրերը և միջոցառումները՝ սերտորեն համագործակցելով լրատվամիջոցների հետ:

2022 թվականի ընթացքում զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) 221 անդրադարձ են ունեցել Հիմնադրամի աշխատանքներին, այդ թվում՝ 50 հեռուստառեպորտաժ, 2 մամուլի ասուլիս:



Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամն իր պաշտոնական կայքի (armroad.am), սոցիալական հարթակների և մամուլի հաղորդագրությունների միջոցով ԶԼՄ-ներին և հանրությանը տրամադրել է 472 ծանուցում ճանապարհների անցանելիության վերաբերյալ:

Հրապարակվել է 66 հայտարարություն ճանապարհային ոլորտի մրցույթների, հանրային լսումների և այլ թեմաների վերաբերյալ:

Հիմնադրամը պատասխանել է լրագրողների՝ «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով, էլեկտրոնային փոստով ստացված և բանավոր հարցումներին:

Հիմնադրամի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և սոցիալական ցանցերի այլ հարթակներում պարբերաբար տեղադրվել են լուսանկարներ և տեսանյութեր իրականացվող ճանապարհաշինական, ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ սպասարկման աշխատանքների և Հիմնադրամի գործունեությանն առնչվող այլ թեմաների վերաբերյալ: